

2471^P

13

~~2471~~

13955



13955



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Հասցիւղի Նուպար-Շահնագարեան վարժարանի ուսանողներն 1871 սեպտեմբեր 1 ին Կիլիկիոյ Հանրն քաղաքին մէջ վարժարան մը բանալու նպատակաւ *Վարդանէտն* անուամբ Ընկերութիւն մը կազմեցին, որ գործադրեց իւր նպատակը, յաւէ կամ նուազ յաջողութեամբ, այլ անյողողոյ յարատեւութեամբ: 1879 Փետրուար 18ին, Բարձրացնորհ Տէր Ներսէս Ս. Պատրիարքի հովանաւորութեան ներքեւ, սոյն Ընկերութիւնը վերակազմուեցաւ ԿԻԼԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ անուամբ, իւր նպատակի գործադրութեան ապարէզ ընտելով ամբողջ Կիլիկիան:

13955

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԿԻԼԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1871 ԻՆ

ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԷՆ

Ն Պ Ա Տ Ա Կ

Ազգային դաստիարակութիւնն ընդհանրացունել

Կիլիկիոյ մէջ:

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. Ընկերութեանս կրնայ անդամակցիլ ամեն Հայ, եթէ մէկ ընկերի կողմէ առաջարկուի եւ Գործադիր ժողովէն ընդունուի:

Յօդ. 2. Դաւառաց մէջ քաղաքները կը կազմեն Ընկերութեանս գործօն ճիւղերը, որք իւր վարչական սկզբանց համեմատ կը կառավարուին:

Յօդ. 3. Անձնիւր ընկեր պարսի ամիսը առ նուազն մէկ բաժին վճարել, որ է մէկ ղուրուշ արծաթ:

Յօդ. 4. Ընկերութիւնս Ընդհանուր եւ Գործադիր ժողովոց Դիւաններուն հաւանութեամբ կ'ընդունի պատուոյ անդամներ ալ հետեւեալ պայմաններով:

Ա. Անձնիւր պատուոյ անդամ պարսի տարին առ նուազն երեք օսմանեան ոսկի բաժնեկին վճարել:

Բ. Անձնիւր պատուոյ անդամ իրաւունք ունի Ընդհա-

նուր ժողովոյ նիստերուն ներկայ գտնուիլ եւ իւր ղիտ-
ղութիւնները գրաւոր կերպով հաղորդել Դիւանին :

ՎԱՐՁԱՆՔԻՒՆ

Յօդ. 5. Ընկերութեանս Վարչական մարմինը կը կազ-
մեն Ընդհանուր ժողով մը եւ Գործադիր ժողով մը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 6. Ընդհանուր ժողովոյ պաշտօնն է ,

Ա. Ընկերութեան բոլոր գործոց վերահսկումը եւ
համարառումը ամեն օրինական նստի մէջ , որ երկու
ամիսը անգամ մը տեղի կ'ունենայ :

Բ. Ընտրել երաշխաւորեալ զանձնակէս մը որ պաշտօնա-
պէս եւ անհատապէս պատասխանատու է Ընդհանուր եւ
Գործադիր ժողովոյ , ընտրել նաեւ Գործադիր ժողովոյ
միւս անդամները եւ կնքապահ մը , որոյ պաշտօնն է կնքել
Ընկերութեան պաշտօնագրերը եւ տոմսերը :

Գ. Գործադիր ժողովոյ գործելու եղանակը զծել գրաւոր
հրահանգով :

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 7. Գործադիր ժողովոյ պաշտօնն է ,

Ա. Ընկերութեան ընթացիկ գործերը կատարել :

Բ. Պատասխանել Ընկերութեան հաշուեցոյցը եւ դպրոցա-
կան յայտագիրը եւ Ընդհանուր ժողովոյ վաւերացմամբ
գործադրել զայնս :

Յօդ. 8. Գործադիր ժողովը կը բաղկանայ եօթ անձերէ,
որք հաւարաբար պատասխանատու են Ընդհանուր ժո-
ղովոյ :

ՎԱՐՁԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔ

Յօդ. 9. Անձնիւր ժողով կ'ընտրէ իւր Դիւանը :

Յօդ. 10. Ընտրութիւնը գաղտնի քուէով կը կատարուին :

Յօդ. 11. Նոյն անձը թէ՛ համարատու եւ թէ՛ համարա-
ռու չը կրնար ըլլալ :

Յօդ. 12. Ո եւ է կերպով հրաժարեալ ընկեր մը իրա-
ւունք չունի ոչինչ պահանջել :

Յօդ. 13. Ընդհանուր ժողովոյ նիստերը կանխաւ կ'ազ-
դարարուին ընկերաց թէ՛ յատուկ հրաւիրագրերով եւ թէ՛
լրագրաց միջոցաւ :

Յօդ. 14. Ընդհանուր ժողովը կը գումարի ներկայ ան-
դամներով . բացակայք տուած որոշմանց դէմ բողոքելու
իրաւունք չունին :

Յօդ. 15. Ընդհանուր ժողովը կրնայ արտաքոյ կարգի
նիստ ընել կամ Ընդհանուր ժողովոյ ղիւանի, կամ Գործա-
դիր ժողովոյ ու կամ 12 անդամաց առաջարկութեամբ :

Յօդ. 16. Ազգային ուրիշ ընկերութեան մը Գործադիր
ժողովոյ անդամ եղող անձինք Ընկերութեանս Գործադիր
ժողովոյն չ'են կրնար անդամակցիլ :

Յօդ. 17. Դիւանի եւ Գործադիր ժողովոյ անդամք վեր-
ընտրելի են, եթէ անվստահութեան քուէով պաշտօնանկ
եղած չ'են :

Յօդ. 18. Իւր պարտքը անձերի չը կատարող ժողով
կամ ժողովական անվստահութեան քուէով պաշտօնանկ
կ'ըլլայ Ընդհանուր ժողովոյ որոշմամբ : Ամբաստանեալը
չը կրնար մասնակցիլ այս բուժարկութեան :

Յօդ. 19. Ընդհանուր ժողովը Գործադիր ժողովոյ գէթ
երկու անդամները նախորդ Գործադիր ժողովոյ մէջէն
կ'ընտրէ, եթէ նոքա անվստահութեան քուէով պաշտօնանկ
եղած չ'են :

Յօդ. 20. Գործադիր ժողովը պարտի Ընդհանուր ժողո-
վոյ ամեն օրինական նստին ներկայացունել իւր գործառ-
նութեանց տեղեկագիրը , ամեն չորս ամիսը Ընկերութեանս

հաշիւները եւ սնտուկին վիճակը , իսկ յունուարի նստին
Ընկերութեան տարեկան տեղեկագիրը :

Յօդ. 21. Գործադիր ժողովոյ հաշիւները եւ սնտուկին
վիճակը քննելու եւ արդիւնքը Ընդհանուր ժողովոյ տեղե-
կագրելու պաշտօնով չորս ամիսն անգամ մը երեք անդամէ
բաղկացեալ հաշուեքննիչ յանձնաժողով մը կ'ընտրուի
Ընդհանուր ժողովէն , Գործադիր ժողովոյ անդամը չեն
մասնակցիր սոյն քուէարկութեան :

Յօդ. 22. Գործադիր ժողովը պարտի նիստ ընել տան
հինգ օրը անգամ մը :

Յօդ. 23. Գործադիր ժողովոյ որոշումները անդամոց
մեծամասնութեամբը վաւերական են :

Յօդ. 24. Գործադիր ժողովը ստիպողական պարագա-
ներու մէջ կարող է ազատաբար գործել , բայց պատասխա-
նատուութիւնը իւր վրայ առնելու եւ Ընդհանուր ժողովոյ
յաջորդ նստին զրաւոր բացատրութիւն տալու պայմանաւ :

Յօդ. 25. Ընդհանուր ժողովոյ դիւանի պաշտօնավա-
րութիւնը երկամեայ եւ Գործադիր ժողովոյ պաշտօնավա-
րութիւնը միամեայ է :

Հ Ա Ս Ո Յ Յ

Յօդ. 26. Ընկերութեան հասոյթն է առ այժմ :

Ա. Ընկերաց ամաստուրք .

Բ. Պատուոյ անդամոց բաժնեգիրք :

Գ. Ի նպաստ Ընկերութեան հաւարեալ նուէրք :

Յօդ. 27. Հասոյթին հարիւրին տասը պահեստի կը մնայ :

Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ւ Յ Ի Ւ Ն

Յօդ. 28. Կանոնագիրս վերաքննելի է ի հարկին , այլ
նպատակն ու ոգին անփոփոխ են :

Կոտսանդնուպօլիս , 43 Մայիս , 1879 ,



ՄԲ Հայագիտական գրադարան



MAL014405

